«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

31 Հոկտեմբերի 2023, N 3 - 4

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 14-Ի N 9 - 1 ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄ» ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդը **որոշում է.**

1. «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի 2021 թվականի ապրիլի 14-ի N 9 - 1 որոշմամբ հաստատված «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության ակադեմիական կազմի ձևավորման կանոնակարգում» կատարել հետևյալ փոփոխությունները.

1) ուժը կորցրած ճանաչել 7-րդ, 18-րդ, 39-րդ և 40-րդ կետերը.

2) 9-րդ, 10-րդ և 11-րդ կետերում «համահեղինակ են (կամ հեղինակ են)» բառերը փոխարինել «հեղինակ են (կամ համահեղինակ են)» բառերով.

3) 13-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«13. **Ասիստենտի** պաշտոն կարող են զբաղեցնել այն անձինք, ովքեր տվյալ մասնագիտությամբ ասպիրանտ (հայցորդ) կամ դիպլոմավորված մասնագետ են, կամ ունեն մագիստրոսի որակավորման աստիճան:».

4) 20-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«20. Պաշտոնի հավակնորդները նշված ժամկետում համալսարանի մարդկային ռեսուրսների կառավարման բաժին են ներկայացնում՝

1) դիմում ռեկտորին,

2) կադրերի հաշվառման անհատական թերթիկը,

3) գիտական (որակավորման) աստիճանը և գիտական կոչումը հաստատող փաստաթղթերի պատճենները (առկայության դեպքում) կամ բարձրագույն մասնագիտական կրթության ավարտական փաստաթղթի (դիպլոմի) պատճենը,

4) հրատարակված գիտական և ուսումնամեթոդական աշխատանքների ցուցակը,

5) ինքնակենսագրություն,

6) ատեստավորման փաստաթուղթ,

7) գիտամանկավարժական ստաժը հավաստող փաստաթղթեր,

8) տեղեկանք ասպիրանտուրան ավարտելու մասին:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Ռ. Գալոյան**

2023 հոկտեմբերի 31

Երևան